Յուրաքանչյուր դիտարկման կետի ճշգրիտ աշխարհագրական կոորդինատները գրանցվել են GPS սարքի միջոցով: Կենսամիջավայրի բնութագրերն արձանագրելու նպատակով օգտագործվել է տեսախցիկ, որի օգնությամբ լուսանկարահանվել է լանդշաֆտը, բուսականությունը, քարքարոտ տարածքներն ու միկրոկենսամիջավայրերը: Այս պատկերները հետագայում օգտագործվել են կենսամիջավայրերի վերլուծության և հարմարության գնահատման նպատակով: Թվային ջերմաչափով չափվել են օդի ջերմաստիճանը և հարաբերական խոնավությունը: Բոլոր չափումներն ու դիտարկումներն անմիջապես գրանցվել են դաշտային տետրում:

Յուրաքանչյուր արձանագրված սողունի դեպքում գրանցվել են՝ տեսակի անվանումը (լատիներեն և հնարավորության դեպքում սովորական անվանումը), անհատների քանակը, հայտնաբերման եղանակը (օրինակ՝ տեսողական դիտարկում կամ ապաստարանի գնում), GPS կոորդինատները և կենսամիջավայրի մանրամասն նկարագիրը: Նույնիսկ այն դեպքում, երբ սողուններ չեն հայտնաբերվել գրանցվել են շրջակա միջավայրի պայմանները և կենսամիջավայրի առանձնահատկությունները՝ բացակայության տվյալները փաստարկելու համար:

Տվյալների մշակում

Սողունների գարնանային դիտարկումները կենտրոնացել են ձմեռումից հետո նրանց ակտիվության, կենսամիջավայրի օգտագործման և վերարտադրողական վարքի նախնական փուլերի վրա: Դաշտային աշխատանքներն իրականացվել են այնպիսի կենսամիջավայրերում, որոնք հարմար են գարնանային ակտիվության համար՝ այդ թվում ժայռոտ լանջեր, տափաստանային և կիսաանապատային տարածքներ:

Դիտարկումները կատարվել են ցերեկային ժամերին՝ բարենպաստ եղանակային պայմաններում՝ համընկնելով սողունների ակտիվության պիկի հետ: Լուսանկարներն օգտագործվել են տեսակների նույնացման և արտաքին բնութագրերի վերլուծության համար: Ջերմաչափի միջոցով չափվել են օդի, սուբստրատի ջերմաստիճանը և հարաբերական խոնավությունը, իսկ տվյալները գրանցվել են դաշտային գրառումներում՝ կենսամիջավայրի պայմանների համատեքստում վերլուծության համար:

Դաշտային աշխատանքների ավարտից հետո բոլոր տվյալները ներմուծվել են աղյուսակում:

Արդյունքներ

Հետազոտությունն իրականացվել է գարնանային ժամանակահատվածում, երբ սողունները հատկապես ակտիվ են ձմեռումից դուրս գալուց հետո: Դիտարկումները կենտրոնացած են եղել քարքարոտ և ժայռոտ տարածքների վրա, որոնք ապահովում են հարմարավետ արևապաշտպան և թաքստոցների պայմաններ: Այս ժամանակաշրջանը կարևոր է սողունների վարքագծի՝ սնման, զուգավորման և տարածքային օգտագործման առանձնահատկությունների ուսումնասիրության համար:

Այս ժամանակահատվածում արձանագրվել են չորս տեսակի մողեսներ՝ *Darevskia raddei*, *Lacerta media*, *Pseudopus apodus*, *Paralaudakia caucasia*, հինգ տեսակի օձեր՝ *Macrovipera lebetina*, *Eirenis punctatolineatus*, *Natrix tessellata*, *Elaphe urartica*, *Hemorrhois ravergieri* և մեկ տեսակի կրիա՝ *Mauremys caspica*:

Darevskia raddei մողեսն ամենահաճախ հանդիպող տեսակն է Քաջարանի հանքավայրի տարածքում: Այն հիմնականում բնակվում է քարքարոտ և ժայռային միջավայրերում՝ նախընտրելով այն հատվածները, որտեղ առկա են բազմաթիվ քարային ծածկույթներ և ճեղքեր՝ ապահովելով ինչպես թաքստոցներ, այնպես էլ ջերմակարգավորման հնարավորություններ: Դաշտային աշխատանքների ընթացքում *D. raddei* տեսակը գրանցվել է յոթ տարբեր կետերում՝

1 - Բացահանքի հս-արմ սահմանի հարևանությամբ գտնվող Թթու ջրի հատված,

3 - Բացահանքի հվ հատված՝ N39°08'04.02" E46°08'08.95",

5 - Չորատեղ (Դարազամ) լցակույտի ստորին հատված՝ N39°08'33.21" E46°10'12.23",

6 - Քաջարան քաղաքի ստորին հատվածի ստուգիչ կետ՝ N39°14'95.37" E46°16'84.60",

14 - Աճանան գետի ափի IV թունելի և մոտակա տարածքի ստուգիչ հատված,

N1 - Բացահանքի ընդլայնված տարածք,

N10 - II դյուկերային անցման հարակից տարածք՝ N39°23'06.91" E46°43'28.30":

Մողեսները դիտարկվել են ակտիվության պայմաններում՝ օդի ջերմաստիճանը մոտ 32°C և հարաբերական խոնավությունը շուրջ 26%, ինչը համահունչ է այս տեսակի՝ գարնանային սեզոնում հայտնի ջերմային ակտիվության միջակայքին:

Սակայն քարային շերտերի մեխանիկական խախտումն ու հեռացումը հաճախ հանգեցնում են ձմեռման համար կարևոր ապաստարանների՝ քարերի ճեղքվածքների և ստորգետնյա խորշերի ոչնչացմանը, որոնք օգտագործվում են այս տեսակի կողմից ձմեռման նպատակով:

Գարնանային դիտարկումների ընթացքում հաճախակի արձանագրվել է նաև *Mauremys caspica*, հատկապես Արծվանիկի պոչամբարի հյուսիսային հատվածում՝ N39°26'26.69" E46°44'97.00": Բոլոր դիտարկված առանձնյակները եղել են մեծ չափերի, սեռահասուն՝ վկայելով կայուն տեղային պոպուլյացիայի առկայության մասին: Կրիաների պատյանները եղել են ամբողջական և անվնաս՝ մատնանշելով նրանց առողջ վիճակն ու ֆիզիկական վնասվածքների բացակայությունը:

Հետազոտության ընթացքում արձանագրվել են հինգ տեսակի օձեր՝

- *Macrovipera lebetina*՝ 10 - Արծվանիկի պոչամբարի հվ հատված՝ N39°13'31.05" E46°27'11.32", բարձ. 889 մ,
- *Macrovipera lebetina*՝ կետ 13 - Արծվանիկի պոչամբարի հս-արլ հատված՝ N39°15'02.41" E46°28'28.58", բարձ. 1072 մ,
- *Eirenis punctatolineatus*՝ N8 - Գեղի ջրամբարի հարակից տարածք 3՝ N39°13'16.50" E46°13'21.67", բարձ. 1440 մ,
- *Natrix tessellata*՝ N11-IV դյուկերային անցման հարակից տարածք,

- *Elaphe urartica*՝ կետ 13՝ Արծվանիկի պոչոմբարի հս-արլ հատված՝ N39°15'02.41" E46°28'28.58", բարձ. 1072 մ,
- *Hemorrhois ravergeri*՝ N7 - Գեղի ջրամբարի հարակից տարածք 2՝ N39°13'13.19" E46°11'52.49", բարձ. 1342 մ:

Այս տեսակներից մեկը՝ գյուրգան (*Macrovipera lebetina*) թունավոր է: Հետազոտության ընթացքում բազմաթիվ սպանված օձեր են արձանագրվել ճանապարհների երկայնքով, ինչը վկայում է մարդու կողմից պայմանավորված բարձր մահացության մակարդակի մասին: Հավանական է, որ շատ օձեր դիտմամբ սպանվել են մարդկանց կողմից, քանի որ նրանք հիմնականում չեն կարողանում տարբերակել թունավոր և ոչ թունավոր տեսակները: Բացի օձերից, ճանապարհներին արձանագրվել են նաև սպանված Դեղնափորիկ (*Pseudopus apodus*):

Աղյուսակ 4. Ուսումնասիրության տարածքում հանդիպող տեսակների ցանկ: RDB AM-ը ցույց է տալիս տեսակի պահպանության կարգավիճակը Հայաստանի Կարմիր գրքում, IUCN-ը ցույց է տալիս տեսակի պահպանության կարգավիճակը IUCN Կարմիր ցուցակում, Բեռնը ցույց է տալիս տեսակի առկայությունը Բեռնի կոնվենցիայի 6-րդ բանաձևում, RR-ն՝ սահմանափակ արեալով տեսակը, իսկ BR-ն՝ բիոմով սահմանափակված տեսակը:

№	Տեսակը Հայերեն	Տեսակը Անգլերեն	Տեսակը Լատիներեն	Հայաստանի ԿԳ RDB AM	ԲՊՄՄ IUCN	Բեռն Bern	ՏԷ RR	ԿՄ BR
1	Միջին մողես	Oriental Three-streaked Green Lizard	<i>Lacerta media</i>	VU	LC	AppII	-	-
2	Ռադդեի ժայռային մողես	Radde's Rock Lizard	<i>Darevskia raddei</i>	VU	LC	AppII	+	+
3	Կովկասյան ագամա	Caucasian Rock Agama	<i>Paralaudakia caucasia</i>	VU	LC	AppII	-	-
4	Դեղնափորիկ	European Glass Lizard	<i>Pseudopus apodus</i>	VU	LC	AppII	+	+
5	Ուրարտյան Մազլցող սահնոց	Urtanian Rat Snake	<i>Elaphe urartica</i>	VU	LC	AppII	-	-
6	Գյուրգա	Levantine Viper	<i>Macrovipera lebetina</i>	VU	LC	AppII	-	-
7	Հայկական էյրենիս	Dotted Dwarf Racer	<i>Eirenis punctatolineatus</i>	VU	LC	AppII	-	-
8	Բազմերանգ Բժանման Սահնոձ	Spotted Whip Snake	<i>Hemorrhois ravergeri</i>	VU	LC	AppII	-	-
9	Ջրային լորսոու	Dice Snake	<i>Natrix tessellata</i>	VU	LC	AppII	-	-
10	Կասպիական կրիա	Caspian Turtle	<i>Mauremys caspica</i>	VU	LC	AppII	-	-

Տեսակի առկայությունը և/կամ քանակությունը բոլոր հետազոտված դիտակետերում ներկայացված է գրանցամատյանում:

 <p>Նկար 9՝ <i>Lacerta media</i>, Area, Point 11, 12, 13</p>	 <p>Նկար 10՝ <i>Darevskia raddei</i>, Area, Point 1, 3, 5, 6, 14, N1 N10, N1</p>	 <p>Նկար 11՝ <i>Paralaudakia caucasi</i>, Area, Point 15, N1</p>
 <p>Նկար 12՝ <i>Pseudopus apodus</i>, Area, Point 11, 12</p>	 <p>Նկար 13՝ <i>Elaphe urartica</i>, Area, Point 13</p>	 <p>Նկար 14՝ <i>Macrovipera lebetina</i>, Area, Point 13, 10</p>
 <p>Նկար 15՝ <i>Eirenis punctatolineatus</i>, Area, Point 7</p>	 <p>Նկար 16՝ <i>Hemorrhois ravergieri</i>, Area, Point N 7</p>	 <p>Նկար 17՝ <i>Natrix tessellata</i>, Area, Point N 11</p>
 <p>Նկար 18՝ <i>Mauremys caspica</i>, Area, Point N 12</p>	 <p>Նկար 19՝ Fieldwork</p>	

Երկկենցաղներ

Տվյալների հավաքագրում

Երկկենցաղների տեսակային բազմազանությունը բացահայտելու համար իրականացվել են ամառային, աշնանային և գարնանային այցելություններ ընտրված տեղամասեր: Այդ ընթացքում դիտարկվել են այդ ողնաշարավորների առկայությունն ընտրված տեղամասերում գտնվող ինչպես ջրային միջավայրերում (ջրամբարներ, ջրափոսեր, գետեր և առուներ), այնպես էլ խոնավ վայրերում (մերձջրային բուսականություն, ծառերի ընկած բներ, փչակներ, քարերի տակ, այլն): Այդ նպատակով յուրաքանչյուր տեղամասում ընտրվել են երկկենցաղների բնակության համար նպաստավոր պայմաններ ունեցող տեղանքներ և առանձնացվել են առնվազն 100 մ երկարության տրանսեկտներ, որի երկայնքով արշավային մեթոդով փնտրվել և հաշվառվել են հանդիպող բոլոր երկկենցաղները:

Երկկենցաղների բազմազանության ուսումնասիրությունն ունի իր առանձնահատկությունները, հաշվի առնելով նրանց կենսաբանական հատկանիշները: Այսպես, զարնանային ուսումնասիրությունների ընթացքում առավել ուշադրություն է դարձվել տարածքների ջրային միջավայրերին, որտեղ երկկենցաղները բազմանում են և ձվադրում: Այս ընթացքում փնտրվել են ինչպես հասուն երկկենցաղները, այնպես էլ դրված գորտնկիթները և շերեփուկները:

Ամառային ուսումնասիրությունների ընթացքում ուշադրություն է դարձվել ինչպես ջրային տարածքների, այնպես էլ ջրամերձ տարածքների վրա՝ հայտնաբերելու զարգացման ուշ փուլերում գտնվող շերեփուկներին և կերպարանափոխությունն նոր ավարտած երկկենցաղներին:

Աշնանային ուսումնասիրությունների ընթացքում ուշադրություն է դարձվել ընտրված տեղամասերի ինչպես ջրային, այնպես էլ խոնավ ցամաքային տեղանքների վրա՝ հայտնաբերելու երկկենցաղների հասունացած ու երիտասարդ առանձնյակներին, որոնք անմիջականորեն կապված չեն ջրային միջավայրի հետ:

Երկկենցաղների տեսակային պատկանելությունը որոշելու համար կատարվել է հանդիպած առանձնյակների լուսանկարահանում, առանձին դեպքերում՝ որս (ձեռքով, ցանցով): Տեսակը համապատասխան որոշիչներով որոշելուց հետո բոլոր որսված առանձնյակները վերադարձվել են դեպի բնություն:

Այն դեպքերում, երբ տվյալ տեղամասում հանքարդյունաբերական գործունեությունը կամ մարդածին այլ գործոններ սպառնացել են երկկենցաղների հետագա գոյությանը՝ կատարվել է երկկենցաղների ու նրանց շերեփուկների որս ու տեղափոխում հարակից անվտանգ ու նպաստավոր պայմաններ ունեցող տեղավայրեր:

Արդյունքներ

Ուսումնասիրված դիտակետերում դիտարկվել են 3 տեսակի պատկանող երկկենցաղներ՝ փոքրասիական գորտ *Rana macrocnemis*, փոփոխական կանաչ դոդոշ *Bufotes sitibundus* և լճագորտ *Pelophilax ridibundus*: Այդ տեսակներից որևէ մեկն ընդգրկված չէ ՀՀ կենդանիների Կարմիր գրքում և Բեռնի կոնվենցիայի 6-րդ բանաձևում: ԲՊՄՄ Կարմիր ցուցակում բոլոր տեսակներն էլ ընդգրկված են LC կարգավիճակով և չեն հանդիսանում տարածաշրջանային էնդեմիկներ ու կենսամիջավայրին մասնագիտացված տեսակներ:

Աղյուսակ 5. Ուսումնասիրության տարածքում հանդիպող երկկենցաղների տեսակների ցանկ: RDB AM-ը ցույց է տալիս տեսակի պահպանության կարգավիճակը Հայաստանի Կարմիր գրքում, IUCN-ը ցույց է տալիս տեսակի պահպանության կարգավիճակը IUCN Կարմիր ցուցակում,Բեռնը ցույց է տալիս տեսակի առկայությունը Բեռնի կոնվենցիայի 6-րդ բանաձևում, RR-ն՝ սահմանափակ արեալով տեսակը, իսկ BR-ն՝ բիոմով սահմանափակված տեսակը:

№	Տեսակը Հայերեն	Տեսակը Անգլերեն	Տեսակը Լատիներեն	Հայաստանի ԿԳ RDB AM	ԲՊՄՄ IUCN	Բեռն Bern	ՏԷ RR	ԿՄ BR
1	Փոքրասիական գորտ	Long-legged wood frog(Brusa frog)	<i>Rana macrocnemis</i>	-	LC	-	-	-
2	Փոփոխական կանաչ դոդոշ	Variable Toad	<i>Bufotes sitibundus</i>	-	LC	-	-	-
3	Լճագորտ	Marsh frog	<i>Pelophilax ridibundus</i>	-	LC	-	-	-

Երկկենցաղների յուրաքանչյուր տեսակի առկայությունը և/կամ քանակությունը բոլոր հետազոտված դիտակետերում ներկայացված է գրանցամատյանում:



Նկար 20՝ Long-legged wood frog.
Բացահանքի հս-արմ. սահմանի
հարևանությամբ գտնվող Թթու ջրի
հատված, KJRN_001



Նկար 21՝ Variable toad: Ջրի ավազան 2-
ի հարակից տարածք, KJRN_022



Նկար 22՝ Նկար 23՝ Marsh frog: I
դյուկերային անցման հարակից
տարածք, KJRN_024

Ձկներ

Տվյալների հավաքագրում

Ուսումնասիրվող տարածքներում ձկների բազմազանությունը վերհանելու նպատակով առանձնացվել են այն տեղամասերը, որտեղ առկա են գետեր, ջրամբարներ, գետակներ, առվակներ, որտեղ հնարավոր է ձկների առկայությունը: Չեն հետազոտվել այն տեղամասերը, որտեղ բացակայում են ջրային տարածքները:

Ընտրված տեղամասերում առանձնացվել են ձկների նմուշառման համար հարմար վայրեր: Ընտրված նմուշառման կետերում իրականացվել են հետևյալ գործողությունները.

Ըստ տարվա եղանակների (գարուն, ամառ, աշուն) գրանցվել են ձկնատեսակների կազմի և դրանց քանակական հարաբերակցության փոփոխությունները: Այդ նպատակով ընտրվել են գետի և ջրամբարների նմուշառման առավել հարմար վայրերը: Ձկների տեսակային կազմը որոշելու համար այստեղ կատարվել են ձկների նմուշառում: Դրա իրականացման համար ջրի մեջ տեղադրվել են 80 սմ տրամագծով և ցանցի 3 մմ անցքերով 1-10 խեցգետնորսիչներ: Միաժամանակ օգտագործվել են 70 սմ տրամագծով և ցանցի 2 մմ ճեղք ունեցող վերհան ձկնորսական ցանց և 60 սմ տրամագծով, 0.5 մմ ցանցի ճեղքով ու 1.5 մ երկարություն ունեցող ձեռքի ձկնորսական ցանց: Առանձին դեպքերում և ըստ անհրաժեշտության օգտագործվել են դնովի ձկնորսական ցանցեր, էկրաններ, ձկնորսական կարթեր:

Ձկների բոլոր որսված առանձնյակների տեսակային պատկանելությունը որոշելուց և ըստ տեսակների քանակը հաշվարկելուց հետո ձկները վերադարձվել են բնական միջավայր: Ձկների տեսակային պատկանելությունը որոշվել է ըստ համապատասխան որոշիչի՝ արտաքին հատկանիշների հիման վրա (Պիպոյան, 2021): Առանձին դեպքերում, որոշ առանձնյակների կարգաբանական դիրքի որոշման համար, դրանք վերցվել են բնությունից, հետագա լաբորատոր ուսումնասիրությունների համար, որոնք կատարվել են տարբեր գիտահետազոտական հիմնարկություններում (Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևանի պետական համալսարան, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն):

Արդյունքներ

Ուսումնասիրված դիտակետերում զարնանը դիտարկվել են 3 տեսակի պատկանող ձկներ՝ արևելյան տառեխիկ *Alburnoides eichwaldii*, կարմրակն *Rutilus cf. lacustris*, ծիածանախայտ *Oncorhynchus mykiss*: Այդ տեսակներից որևէ մեկն ընդգրկված չէ ՀՀ կենդանիների Կարմիր գրքում և Բեռնի կոնվենցիայի 6-րդ բանաձևում: ԲՊՄՄ Կարմիր ցուցակում բոլոր տեսակներն էլ ընդգրկված են LC կարգավիճակով և չեն հանդիսանում տարածաշրջանային էնդեմիկներ ու կենսամիջավայրին մասնագիտացված տեսակներ:

Աղյուսակ 6. Ուսումնասիրության տարածքում հանդիպող ձկների տեսակների ցանկ: RDB AM-ը ցույց է տալիս տեսակի պահպանության կարգավիճակը Հայաստանի Կարմիր գրքում, IUCN-ը ցույց է տալիս տեսակի պահպանության կարգավիճակը IUCN Կարմիր ցուցակում, Բեռնը ցույց է տալիս տեսակի առկայությունը Բեռնի կոնվենցիայի 6-րդ բանաձևում, RR-ն՝ սահմանափակ արեալով տեսակը, իսկ BR-ն՝ բիոմով սահմանափակված տեսակը:

№	Տեսակը Հայերեն	Տեսակը Անգլերեն	Տեսակը Լատիներեն	Հայաստանի ԿԳ RDB AM	ԲՊՄՄ IUCN	Բեռն Bern	ՏԷ RR	ԿՄ BR
1	Ծիածանախայտ	Caspian trout	<i>Salmo caspius</i>	-	-	-	-	-
2	Արևելյան տառեխիկ	Kura spirilin	<i>Alburnoides eichwaldii</i>	-	LC	-	-	-
3	Կարմրակն	Siberian roach	<i>Rutilus cf. lacustris</i>	-	-	-	-	-

Տեսակների առկայությունը և/կամ քանակությունը բոլոր հետազոտված դիտակետերում ներկայացված է գրանցամատյանում:

 <p>Նկար 24՝ Rainbow trout: Գեղի ջրամբարի հարակից տարածք 1, KJRN_021</p>	 <p>Նկար 25՝ Kura spirilin, Գեղի ջրամբարի հարակից տարածք 1, KJRN_021</p>	 <p>Նկար 26՝ Siberian roach, Գեղի ջրամբարի հարակից տարածք 1, KJRN_021</p>
---	---	---

Անողնաշարավորներ (ցամաքային)

Տվյալների հավաքագրում

Անողնաշարավորների հետազոտությունն իրականացվել է բոլոր 28 նշանակված կետերում, ապահովելով տվյալների մանրակրկիտ հավաքագրում՝ հետազոտված տարածքում թիթեռների բազմազանության և տարածվածության վերլուծության, ինչպես նաև գնահատման համար:

Տվյալների մշակում

Սկզբնական տվյալների մշակումը ներառում է դիտարկված յուրաքանչյուր թիթեռի տեսակի պահպանման առաջնահերթության գնահատումը, որը թույլ է տալիս նույնականացնել այն տեսակները,

որոնք կարող են պահանջել անհապաղ պահպանման ջանքեր կամ կառավարման ռազմավարություններ՝ հիմնվելով դրանց տարածվածության և էկոլոգիական նշանակության վրա:

Աղյուսակներ

Ընդհանուր տեսակ նկարագրություն՝ 14, չկան Հայաստանի Կարմիր գրքում, չկան IUCN Կարմիր ցուցակում, չկան Բեռնի կոնվենցիայի 6-րդ բանաձևում, չկան սահմանափակ արեալի տեսակներ և չկան կենսաբազմազանության սահմանափակ տեսակներ:

Աղյուսակ 7. Ուսումնասիրության տարածքում հանդիպող թիթեռների տեսակների ցանկ: RDB AM-ը ցույց է տալիս տեսակի պահպանության կարգավիճակը Հայաստանի Կարմիր գրքում, IUCN-ը ցույց է տալիս տեսակի պահպանության կարգավիճակը IUCN Կարմիր ցուցակում, Bern indicates the presence of the species in the Resolution 6 of Bern Convention, RR indicates Restricted Range species, and BR indicates Biome-Restricted species.

№	Տեսակը Հայերեն	Տեսակը Անգլերեն	Տեսակը Լատիներեն	Հայաստանի ԿԳ RDB AM	ԲՊՄՄ IUCN	Բեռն Bern	ՏԷ RR	ԿՄ BR
1		Small copper	Lycaena phlaeas	NE	LC	-		
2	Գարնանային կապտաթիթեռ	Holly blue	Celastrina argiolus	NE	LC	-		
3	Պամֆիլուս	Small Heath	Coenonympha pamphilus	NE	LC	-		
4	Տիտիբուս կապտաթիթեռ	Sooty Copper	Lycaena tityrus					
5	Հարավային դեղնաթիթեռ	Berger's Clouded Yellow	Colias alfacariensis	NE	LC	-		
6	Գեղեցիկ կապտաթիթեռ	Adonis Blue	Polyommatus bellargus	NE	LC	-		
7	Իկար կապտաթիթեռ	Common Blue	Polyommatus icarus	NE	LC	-		
8	Մեգերա	Wall Brown	Lasiommata megera	NE	LC	-		
9	Մախաոն	Old World swallowtail	Papilio machaon	NE	LC	-		
10	Կռատուկի վանեսա	Painted Lad	Vanessa cardui	NE	LC	-		
11		Hummingbird hawk-moth	Macroglossum stellatarum					
12		Large White	Pieris brassicae	NE	LC	-		
13	Լաթոնիա	Queen of Spain Fritillary	Issoria lathonia	NE	LC	-		
14		Hungarian Skipper	Spialia orbifer	-	LC	-		

Տեսակների առկայությունը և/կամ քանակությունը բոլոր հետազոտված դիտակետերում ներկայացված է գրանցամատյանում:

Ֆլորա և բուսականություն

Տվյալների հավաքագրում

2025 թվականի գարնանային սեզոնին (ապրիլի 19-ից մայիսի 26-ը) ուսումնասիրվել են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բացահանքի, դատարկ ապարների լցակույտերի, դյուկերների, Արծվանիկի պոչամբարի շրջակայքերի, Գեղի և Աճանան գետերի ափերի նշված հատվածների ֆլորան և բուսականությունը:

Տվյալների մշակում

Հավաքված նյութերը մշակվել են 2025 թվականի մայիս-հունիս ամիսների ընթացքում:

Արդյունքներ

Ընդհանուր նկարագրություն - 182 տեսակ, 1-ը ՀՀ Կարմիր գրքում, ոչ մեկը IUCN-ի Կարմիր գրքում, ոչ մեկը Բեռնի կոնվենցիայի 6-րդ կետում (տե՛ս գրանցամատյանը): Կարմիրգրքային տեսակը հադիպել է մշակության մեջ:

Ընթացիկ տարվա գարնանային սեզոնին ուսումնասիրվել են ԶՊՄ կոմբինատի կողմից առաջադրված բոլոր 28 տեղավայրերի ֆլորայի կազմը: Ուսումնասիրված բուսատեսակների քանակը կազմել է 182, որոնցից մոտ կեսը կրկնվում են 2024 թվականի ընթացքում ֆիքսված տեսակների հետ: Գարնանը ուսումնասիրված 182 տեսակները պատկանում են 65 ընտանիքի, 135 ցեղի: Տեսակների քանակը յուրաքանչյուր տեղամասի համար կազմել է 1-ից 38 անուն (տե՛ս գրանցամատյանը), ընդհանուր առմամբ կատարվել է 529 առանձնյակների տեսակների որոշում:

Գարնանային հավաքների մեջ նորությունները հիմնականում պատկանում են գարնանային սոխուկավոր կամ վաղ ծաղկող դեկորատիվ բուսատեսակներին:

Աղյուսակ 8. Ուսումնասիրության տարածքում հանդիպող բույսերի տեսակների ցանկ: RDB AM-ը ցույց է տալիս տեսակի պահպանության կարգավիճակը Հայաստանի Կարմիր գրքում, IUCN-ը ցույց է տալիս տեսակի պահպանության կարգավիճակը IUCN Կարմիր ցուցակում, Բեռնը ցույց է տալիս տեսակի առկայությունը Բեռնի կոնվենցիայի 6-րդ բանաձևում, RR-ն՝ սահմանափակ արեալով տեսակը, իսկ BR-ն՝ բիոմով սահմանափակված տեսակը:

№	Տեսակը Հայերեն	Տեսակը Անգլերեն	Տեսակը Լատիներեն	Հայաստանի ԿԳ RDB AM	ԲՊՄՄ IUCN	Բեռն Bern	ՏԷ RR	ԿՄ BR
1	Սոսի արևելյան	Oriental plane	<i>Platanus orientalis</i> L.	EN	-	-	-	-

Քարաքոսեր

Տվյալների հավաքագրում

Տվյալների հավաքագրումը կատարվել է 2025 թվականի գարնանային սեզոնին՝ (ապրիլի 17-ից 20-ը) բոլոր տեղավայրերից: Այն իր մեջ ներառել է բնակատեղիի բնութագիրը, GPS տվյալների գրանցումը, քարաքոսերի տեսակների լուսանկարումը, ինչպես նաև նմուշառումը՝ հետագա ուսումնասիրությունների և վերլուծությունների համար: Քարաքոսերը սովորաբար հավաքվում են

իրենց ենթաշերտի հետ միասին: Թփանման և տերևանման քարաքոսերը հավաքվել են դանակի օգնությամբ (առանց ծառերին վնասելու) կամ ճյուղի կտորով: Կեղևանման քարաքոսերի դեպքում նմուշները վերցվել են փոքր քարերի կտորներով կամ պարզապես քերվածքով: Հավաքված քարաքոսերի յուրաքանչյուր պիտակավորված նմուշ տեղադրվել է հատուկ թղթե փաթեթի մեջ, այնուհետև տվյալ դիտակետի ամբողջ հավաքածուն տեղափոխվել է պոլիէթիլենային պայուսակի մեջ: Դաշտից վերադառնալուց հետո բոլոր նմուշները երեք օր պահվել են սառցարանում (-20°C , միջատների հնարավոր առկայությունը կանխելու համար), այնուհետև տեղափոխվել են չորանոց: Քարաքոսերից ստացված հերբարիումները պահվում են հատուկ պայմաններում՝ հետագայում նույնականացման ճշգրիտ արդյունք ստանալու համար: Տվյալների հավաքագրման ընթացքում արձանագրվել են նաև գերիշխող տեսակները, դրանց էկոլոգիական վիճակը, տարբեր էկոհամակարգերի առկայությունը և բուսականության ընդհանուր նկարագիրը:

Տվյալների մշակում

Հավաքված նյութերը մշակվել են 2025 թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթացքում: Քարաքոսերի նմուշները սկզբում առանձնացվել են ըստ իրենց աճի ձևի, այնուհետև միկրո և մակրո քարաքոսերի բնալի-որոշիչների և համապատասխան գրականության միջոցով կատարվել է մորֆոլոգիական, անատոմիական և քիմիական ուսումնասիրություն: Ստացված տվյալները խմբագրվել են, կատարվել է համակողմանի վերլուծություն և արդյունքների ամփոփում: Որոշ նմուշների ճշգրիտ նույնականացման համար կատարվել է մոլեկուլային ֆիլոգենետիկ հետազոտություն (ԴՆԹ շտրիխ կոդավորում):

Արդյունքներ

Ընդհանուր նկարագրություն - 65 տեսակ, ՀՀ Կարմիր գրքում, ոչ մեկը՝ IUCN-ի Կարմիր գրքում, ոչ մեկը՝ Բեռնի կոնվենցիայի 6-րդ կետում, ոչ մեկը՝ սահմանափակ տարածության տեսակներ և ոչ մեկը՝ միջավայրով սահմանափակված տեսակներ:

Ընդհանուր առմամբ իրականացված քարաքոսերի բազմազանության ուսումնասիրության արդյունքները գնահատվում են դրական: Գարնանային սեզոնին ուսումնասիրվել են ԶՊՄ կոմբինատի կողմից առաջադրված 28 տեղավայրերը: Դիտակետերում առկա տեսակների մոտ էկոլոգիական մտահոգիչ, նկատելի փոփոխություններ չեն արձանագրվել: Ուսումնասիրված տարածքներից քարաքոսերի ամենամեծ բազմազանությունը արձանագրվել է 6 (21) դիտակետում՝ Գեղի ջրամբարի հարակից տարածք 1 (51 տեսակ):


Ընդհանուր առմամբ գրանցվել են քարաքոսերի 65 տեսակներ: Դիտակետերում առավել հաճախ հանդիպող տեսակներն են՝ *Xanthoparmelia cospersa*, *Protoparmeliopsis muralis*, *Xanthoria parietina*, *Rusavskia elegans*, *Rhizocarpon geographicum*, *Rhizoplaca chrysoleuca*: Դիտակետերում առկա որոշ տեսակներ Հայաստանում ունեն տարածվածության բավականին նեղ արեալ և անհրաժեշտ կլիմայի հետագայում ևս կատարել լրացուցիչ հետազոտություն՝ տեսակների մոնիթորինգ: Գեղի ջրամբարի հարակից տարածք 1 դիտակետից հայտնաբերվել է *Teloschistaceae* ընտանիքին պատկանող քարաքոսի տեսակ, որը ամենայն հավանականությամբ նոր է Հայաստանի համար: Տեսակի հստակ նույնականացման համար դեռևս անհրաժեշտ են լրացուցիչ հետազոտություններ:

Աղյուսակ 9. Ուսումնասիրության տարածքում հանդիպող քարաքոսերի տեսակների ցանկ: RDB AM-ը ցույց է տալիս տեսակի պահպանության կարգավիճակը Հայաստանի Կարմիր գրքում, IUCN-ը ցույց է տալիս տեսակի պահպանության կարգավիճակը IUCN Կարմիր ցուցակում, Bern indicates the presence of the species in the Resolution 6 of Bern Convention, RR indicates Restricted Range species, and BR indicates Biome-Restricted species.

№	Տեսակը Հայերեն	Տեսակը Անգլերեն	Տեսակը Լատիներեն	Հայաստանի ԿԳ RDB AM	ԲՊՄՄ IUCN	Բեռն Bern	ՏԷ RR
1	Անապտիխիա խոզանակակիր	Anaptychia setifera (Mereschk.) ex Räsänen	-	-	-	-	-
2	Ասպիցիլիա մոխրագույն	Aspicilia cinerea (L.) Körb. 1855	-	-	-	-	-
3	Դերմատոկարպոն բրդոտ	Dermatocarpon vellereum Zschacke	-	-	-	-	-
4	Դերմատոկարպոն փայլատ կարմիր	Dermatocarpon miniatum (L.) W. Mann	-	-	-	-	-
5	Դիմելենա սահմանափակ	Dimelaena oreina (Ach.) Norman	-	-	-	-	-
6	Լեկանորա բազմազան	Lecanora allophana (Ach.) Nyl.	-	-	-	-	-
7	Լեկանորա ժայռային	Lecanora rupicola (L.) Zahlbr.	-	-	-	-	-
8	Լեկանորա մոխրադեղնավուն	Lecanora argopholis (Ach.) Ach.	-	-	-	-	-
9	Լեկանորա պատի	Protoparmeliopsis muralis (Schreb.) M. Choisy	-	-	-	-	-
10	Լեպրարիա ալեհեր	Lepraria incana (L.) Ach.	-	-	-	-	-
11	Լեցիդեա քարափորագրային	Lecidea lapicida (Ach.) Ach.	-	-	-	-	-
12	Կանդելարիելա դեղնուցադեղին	Candelariella vitellina (Ehrh.) Müll. Arg. 1894	-	-	-	-	-
13	Կլադոնիա եղջերաձև	Cladonia rangiformis Hoffm.	-	-	-	-	-
14	Կլադոնիա ծոպավոր	Cladonia fimbriata (L.) Fr.	-	-	-	-	-
15	Կլադոնիա կուլանման	Cladonia pyxidata (L.) Hoffm.	-	-	-	-	-
16	Կլադոնիա մուգ կանաչ	Cladonia chlorophaea (Flörke ex Sommerf.) Spreng.	-	-	-	-	-
17	Կլադոնիա ոլորվող	Cladonia strepsilis (Ach.) Grognot	-	-	-	-	-
18	Կլադոնիա տերևային	Cladonia foliacea (Huds.) Willd.	-	-	-	-	-
19	Մելանելիքսիա անհարթ	Melanelixia subargentifera (Nyl.) O. Blanco et al.	-	-	-	-	-
20	Մելանոհալեա խորդուբորդ	Melanohalea exasperata (De Not.) O. Blanco et al.	-	-	-	-	-
21	Մելանոհալեա ձիթենու	Melanohalea olivacea (L.) O. Blanco et al.	-	-	-	-	-
22	Ումբիլիկարիա խավոտ	Umbilicaria vellea (L.) Hoffm.	-	-	-	-	-

№	Տեսակը Հայերեն	Տեսակը Անգլերեն	Տեսակը Լատիներեն	Հայաստանի ԿԳ RDB AM	ԲՊՄՄ IUCN	Բեռն Bern	ՏԷ RR
23	Պելտիգերա եղիսաբերթի	<i>Peltigera elisabethae</i> Gyeln.	-	-	-	-	-
24	Պելտիգերա երիզավոր	<i>Peltigera praetextata</i> (Flörke ex Sommerf.) Zopf	-	-	-	-	-
25	Պելտիգերա շիկակարմրավուն	<i>Peltigera rufescens</i> (Weiss) Humb.	-	-	-	-	-
26	Պելտիգերա շնային	<i>Peltigera canina</i> (L.) Willd.	-	-	-	-	-
27	Պլացինթիում սև	<i>Placynthium nigrum</i> (Huds.) Gray	-	-	-	-	-
28	Պլեուրոստիկտա պնակաձև	<i>Pleurosticta acetabulum</i> (Neck.) Elix & Lumbsch	-	-	-	-	-
29	Ռամալինա ալյուրանման	<i>Ramalina farinacea</i> (L.) Ach.	-	-	-	-	-
30	Ռամալինա բազմաձև	<i>Ramalina polymorpha</i> (Liljeblad) Ach.	-	-	-	-	-
31	Ռամալինա չինական	<i>Ramalina sinensis</i> Jatta	-	-	-	-	-
32	Ռիզոկարպոն աշխարհագրական	<i>Rhizocarpon geographicum</i> (L.) DC.	-	-	-	-	-
33	Ռիզոկարպոն երկսպոր	<i>Rhizocarpon disporum</i> (Nägeli ex Hepp) Müll. Arg.	-	-	-	-	-
34	Ռիզոկարպոն գուգադիր	<i>Rhizocarpon geminatum</i> Körb.	-	-	-	-	-
35	Ռիզոպլակա ոսկեսպիտակ	<i>Rhizoplaca chrysoleuca</i> (Sm.) Zopf	-	-	-	-	-
36	Ռիզոպլակա սևաշյա	<i>Rhizoplaca melanophthalma</i> (DC.) Leuckert & Poelt	-	-	-	-	-
37	Տոնինիա փքատերև	<i>Toninia sedifolia</i> (Scop.) Timdal	-	-	-	-	-
38	Ցետրարիա իսլանդական	<i>Cetraria islandica</i> (L.) Ach.	-	-	-	-	-
39	Ցետրարիա փշավոր	<i>Cetraria aculeata</i> (Schreb.) Fr.	-	-	-	-	-
40	Քսանթոմենդոզա գանգրատերև	<i>Xanthomendoza ulophyllodes</i> (Räsänen) Søchting, Kärnefelt & S. Y. Kondr.	-	-	-	-	-
41	Քսանթոմենդոզա խաբուսիկ	<i>Xanthomendoza fallax</i> (Hepp) Søchting, Kärnefelt & S. Y. Kondr.	-	-	-	-	-
42	Քսանթոմենդոզա կարմրադեղնավուն	<i>Xanthomendoza fulva</i> (Hoffm.) Søchting, Kärnefelt & S. Y. Kondr.	-	-	-	-	-
43	Քսանթոպարմելիա մուգ շագանակագույն	<i>Xanthoparmelia pulla</i> (Ach.) O. Blanco et al.	-	-	-	-	-
44	Քսանթոպարմելիա նեղատերև	<i>Xanthoparmelia stenophylla</i> (Gyeln.) Ahti & D. Hawksw.	-	-	-	-	-
45	Քսանթոպարմելիա սփռված	<i>Xanthoparmelia conspersa</i> (Ach.) Hale	-	-	-	-	-

№	Տեսակը Հայերեն	Տեսակը Անգլերեն	Տեսակը Լատիներեն	Հայաստանի ԿԳ RDB AM	ԲՊՄՄ IUCN	Բեռն Bern	ՏԷ RR
46	Քսանթորիա նրբագեղ	Rusavskia elegans (Link) S. Y. Kondr. & Kärnefelt	-	-	-	-	-
47	Քսանթորիա պատի	Xanthoria parietina (L.) Beltr.	-	-	-	-	-
48	Ֆեոֆիսցիա կլորավուն	Phaeophyscia orbicularis (Neck.) Moberg	-	-	-	-	-
49	Ֆիսկոնիա ոլորված	Physconia distorta (With.) J. R. Laundon	-	-	-	-	-
50	Ֆիսցիա այպուլիա	Physcia aipolia (Ehrh. ex Humb.) Fűrnr.	-	-	-	-	-
51	Ֆիսցիա աստղաձև	Physcia stellaris (L.) Nyl.	-	-	-	-	-
52	Ֆիսցիա արտասովոր	Physcia biziana (A. Massal.) Zahlbr.	-	-	-	-	-
53	Ֆիսցիա մազլցող	Physcia adscendens (FR.) H. Olivier	-	-	-	-	-
54	-	Circinaria calcarea (L.) A. Nordin, S. Savić & Tibell	-	-	-	-	-
55	-	Circinaria elmorei (E. D. Rudolph) Owe-Larss. et al. s. lat.	-	-	-	-	-
56	-	Collema subflaccidum Degel.	-	-	-	-	-
57	-	Enchylium tenax (Sw.) Gray	-	-	-	-	-
58	-	Endocarpon adscendens (Anzi) Müll. Arg.	-	-	-	-	-
59	-	Lathagrium auriforme (With.) Otálora et al.	-	-	-	-	-
60	-	Lepraria finkii (de Lesd.) R. C. Harris	-	-	-	-	-
61	-	Lichinella nigritella P.P. Moreno & Egea	-	-	-	-	-
62	-	Parmelia squarrosa Hale	-	-	-	-	-
63	-	Protoparmeliopsis garovaglii (Körb.) Arup et al.	-	-	-	-	-
64	-	Protoparmeliopsis klauskalbii (Sipman) Senkardesler	-	-	-	-	-
65	-	Toninia candida (Weber) Th. Fr.	-	-	-	-	-



Նկար 27՝ *Rhizocarpon geographicum* species in the Area 1 adjacent to Geghi Reservoir (Point 6.21)



Նկար 28՝ *Rusavskia elegans* species in the Area 3 adjacent to Geghi Reservoir (Point 8.23)



Նկար 29՝ *Xanthoparmelia conspersa* species at the control section observation point near the village of Dzorastan (Point 15)



Նկար 30՝ *Peltigera elisabethae* species in the empty rock fill section of the Voghji River valley (Point 8)

Ուսումնասիրությունն իրականացրել և
հաշվետվությունը ներկայացրել է
«Բիոգեոտեխ» ՍՊ ընկերությունը՝ տնօրեն




Գարեգին Սևոյան

Քարտ 2 - ՍՆԵՄԱ


Արտաթողման դիտակետերի տարածական տեղաբաշխման

Մասշտաբ 1 : 50 000



Քարտեզ 1՝ Արտաթողման (մակերևութային ջրերի) դիտակետերի տարածական տեղաբաշխման

Քարտեզ - Սխեմա
Օդի որակի մշտադիտարկման կետերի տարածական տեղաբաշխման



Քարտեզ 2՝ Օդի որակի մշտադիտարկման դիտակետերի տարածական տեղաբաշխման



Քարտեզ 3՝ Ստորգետնյա ջրերի դիտակետերի տեղադիրքեր